

վեցուցի անոնց այն անյատակ կորրսան ճահիճը ուսկից աղատում չի կայ : Չեր հիմա ինծի խոստացած նպաստը, տեարք, ոչ միայն սիրով կ'ընդունիմ, այլ և կ'աղաշեմ որ որդւոցս փրկութեանը աշխատիք, վասն զի ես կարող չեմ անոնց քարեղէն սրտին մէջ խաղաղութիւն սերմաննելու :

Երկու բարեկամիք կը ջանային զանիկայ խաղաղելու, բայց նա գլուխը շարժելով կ'ըսէր անդադար ինքն իրեն . Անագան է, շատ անագան :

Լճին եղերը պատահական դիպուածէն ստիպեցան շուտով մայրաքաղաք երթալու . ուստի անմիջապէս երկրորդ օրը ճամբայ ելան հետերնին առնելով դժբախտ իշխանը ու իրհարտը . և դեռ կառքին մէջ կը քաջալերէին դրացի իշխանը ըսելով . « Աստուծոյ ողորմութեամիը ամենայն ինչ աղէկի կը փոխուի » : Բայց այն մեռելատիպ տժգոյն դիմօք իշխանը՝ որոյ անթարթափ պաղացերը յուսոյ նշան մը չէին ցուցըներ, անցեալ երեկոյեան պէս հիմա ալ կը շարժէր զլուխը ու խորին հառաչանգք կ'ըսէր . « Շատ անագան » : Ի զուր կը մաքառէր սիրտը ըրած գուշակութեանը դէմ, անկարելի ըլլալով հեռացընել զայն սրտէն, վասն զի իրքն ստուեր իրհետը կը շրջէր :

Իր շարունակուի:

Ա.Ի.Ս.Տ.Ր.Ա.Լ.Ի.Ո.Ց

ՑԵՂԱՊԵՏՔ ԵՒ ՍՆՈՒՑ ԿԸՆԱՅՔԸ


1. Արքայ Գուլիէլմոս (Պուլ Լիփ Պուլ Լիփ) Պալլարադի ցեղին ցեղապետ . — 2. 3. Մարիամ և Ռոզա անոր կանայքը . — 4. Միւսի Ֆլընտըրդ Կոլպորն ցեղին ցեղապետ . — 5. Մարիամ անոր կնիկը . — 6. Սիմէոն (Վոնկա Վոնկա) Եարա Եարայի ցեղին ցեղապետ . — 7. Մարիամ անոր կնիկը :

Աւստրալիոյ բնիկները մարդկային տեսակին բոլորովին նախնական տիպ մը կը ներկայացնեն . փոքրահասակ, նիհար, պղընձագոյնի գարնող մորթով, մարդակեր են ու վրանաբնակ կ'ապրին՝

որսորդութեամբ և ձկնորսութեամբ կերակրուելով: Ուր կրցեր են մօտենալ եւրոպական քաղաքականութեան, շատ դժուարութիւն կրելէն ետքը՝ վերջապէս մարդակերութիւնը գոնէ հրապարակաւ մէկդի թողեր են . սակայն անոնք որ նոյն աշխարհին խորերը թափառաւական կ'ապրին, դեռ ևս իրենց կատաղի մարդակերութեան բնաւորութիւնը կը շարունակեն, անանկ որ մինչև իրենց նորածին տղայքն իսկ կը սպաննեն ուտելու համար: Ի վերայ այսր ամենայինի մէկքանի բարիյատկութիւններէ զուրկ չեն . քաջ ու խոհական դիտող են . անանկ որ ոմանք յաջողեր են մինչև կարդալ ու գրել սորվիլ, և նաև մէկ քանի տղիտօրէն թուաբանութեան հաշիւները ընել: Սակայն որչափ ցայսօր ջանք եղած են այն ժողովուրդները հաստատուն և քաղաքակիրթ կեանքի մը վերածելու՝ բոլորը անօգուտ եղեր են: Եւ թէ և յուսացուիրապագայն ընտրելացնէ անոնց թէ եւրոպական սովորոյթքը և թէ քրիստոնէական կրօնքը, սակայն այդպիսի յոյս մը հեռի կ'երևայ ճշմարտելէն, վասն զի այն ցեղերէն ոմանք արդէն իսկ անհետացած են, և միւսներն իսկ հետզհետէ կը նուազին, անանկ որ քիչ ատենէ և ոչիսկ անոնց հետքը պիտի մնայ:

Վերը ըսինք որ նաև ցայսօր այն Աւստրալիացիք որ իրենց սկզբնական վայրենութեան մէջ կը գտնուին, մարդակերութիւնը կը շարունակեն . այս ալ կը յաւելունք ըսելու, որ ոչ միայն սպիտակամորթները՝ այլ նաև բնիկ այլացեղ սեամորթներն ալ սովոր են յափշտակելու և եփելով ուտելու: Եղած է նաև երբեմն որ մարդկային խարշած միս եւրոպացի հիւրոց առջին դրած են, զիրենք իրենց ցեղին համարելով, այլ իբր միւս աշխարհէն եկած ընտրելագոյն և սպիտակագոյն կերպարանգք :

Անգղիոյ տէրութիւնը նոյն երկրին մէջ յառաջադիմելով, ուր կրցեր է համար և անտառները ասանկ բարբարութիւն ընողներէ, ինչպէս ըսենք, մաքրել, զսպեր է բոլոր այդ կատաղի սովորութիւնները, թէպէտ և գաղտնի




մարդակերութիւնը բոլորովին ջնջել չէ կրցած։ Աւստրալիացի բնկաց արտաքին երևոյթը ընդհանրապէս հաճոյական չէ, և զիխաւորապէս կանայք շատ տղեղապէմ են. վիկտորիոյ գաղթականութեանը մէջ էրիկ մարդիկ աւելի բարետես երևոյթը մը ունին, կամ գոնէ իրենց խիտ մօրուքովը և բարձր ճակատովը աւելի վայելչութիւն մը կ'երևցնեն. բերաննին մեծ է, սակայն շրթունքնին սևամորթից նման ստուար չեն. մազերնին երկայն, փայլուն և աւելի գանգուր։ Մորթերնին բոլորովին սև չէ, այլ ինչպէս ըստինք, թուխ մթնագոյն, զոր իրենք դարձեալ իւղով և ածխով կը շփեն՝ ալ աւելի սևատես ընելուհամար։ Ընդհանրապէս մերկ կը շրջին, և միայն անոնք որ սպիտակամորթից հետ յարաբերութիւն ունին՝ այլ և այլ կենդանեաց մորթերով կը ծածկուին։ Հաստատուն բնակարաններ շինելու սովորութիւն չունին, և մանաւանդ կլիմային բարեխառնութեանը պատճառաւ բնակարանի շինութիւնը բոլորովին զանց կ'ընեն։ Ամառ ատեն ծառի ճիւղեր ցցերու տալով, իրենք իրենց պատսպարան մը կը շինեն արեսուն ճառագայթից սաստկութեանը դէմ։ Զմեռ ատեն ծառի կեղևները յարկակերպ տախտակամածի մը վրայ հաստատելով, իրենց բնակարաններ կը շինեն։

Այն ցեղերը որ անդղիական ստացուածոց աւելի մերձաւոր են և անդղիացւոց հետ յարաբերութիւն ունին, կերպով մը իրենց սովորութեանցը մէջ քաղաքականացած են, ինչպէս հագուելու եղանակին և զինուց տեսակին մէջ, անանկ որ և ոչ հրազէնք իսկ կը պակսին իրենց։ Վալդէր, Գերմանացի լուսանկարիչ մը, որմէն առնուած են այս մեր հոս տեղս դրած պատկերները, պղտի արշաւանք մը ըրած է այն ցեղերուն մէջ՝ որ քիչ շատ սահմանակից են Բրիտանական գաղթականութեանց։ Նախ Պունինկոնկ պղտի ցեղին այց ելերէ, Պալլարաց քաղաքին մօտ (վիկտորիայ գաղթականութեանը մէջ), որուն զիխաւոր ցեղապետն է Պուլ լիփ Պուլ

լիփ, կամ ըստ գաղթականաց Արքայ գուշիկմոս։ Այս ցեղապետը ազնիւ ընդունելութիւն ըրաւ ճանապարհորդին վանեսողոկ (եղբայր) անունը տալով անոր. իրենց ծանօթ ամենէն ընտիր համազամքը անոր առջին դրաւ, ինչպէս են փայտը կրծող տեսակ մը ճերմակ մեծ որդեր կամ ցեցեր, գրեթէ ճանձի մը կրկին մեծութեամբ։ Այս ցեղապետս երկու կնիկ ունէր, Ռողա և Մարիամ։ Ընթերցողը պատկերին աչք մը տալով կրնայ ըմբռնել անոնց դիմաց երևոյթը և եւրոպական հագուստին տարազը։ Վալդէրին ըստին նայելով, Արքայ Գուլիէլմոս արիասիրտ մարդու մը երևոյթն ունի, սակայն կերպարանքին վրայ բան մը կայ որ օրանկութանկը կը յիշեցընէ։ Մեր պատկերը զինքը լուսանկար ըլլալու գիրքի մէջ կը ներկայացընէ, ձեռքը մալքան բռնած, որ տեսակ մը վահան է։ Ելախտի հարուածոց դէմ պաշտպանելու կը ծառայէ։ Քէօնիկրացի պատերազմին լուրը իր ականջն ալ հասած ըլլալով, հազարումէկ հարցմունքներ ըրաւ վալդէրին՝ Բրուսիոյ տէրութեան և անոր գործոց վրայ։ Եւ որովհետեւ Վալդէր շատ մը Աւստրալիոյ զէնքերէն ստացաւ, Պուլ լիփ Պուլ լիփ միտքը դրաւ որ այն զէնքերը Բրուսիան Աւստրիոյ դէմ պիտոր գործածէր։

Մեր լուսանկարիչը յետոյ ուրիշ ցեղի մը այցելու եղաւ կոլպորն գետին ափունքը, որուն բագաւորը (այսպէս ինքզինքը կանչել կու տար) Միւսի Ֆլընտըրդ կը կոչուէր։ Շքեղ վայրենի մարդու մը կերպարանք ունէր, լայն քիւպով և երկայն գորշագոյն մօրուքով։ Անոր Մարիամ կինը, որ տարկը առած խորշումերես կնիկ մըն էր, իր լուսանկար պատկերը հանելտալու համար, կրցածին չափ չքեղութեամբ հագուեր զարդարուեր էր, և իր պատկերը տեսնելով ինքզինքը շատ գոհ ցցուց։

Վալդէր անկէ սահմանակից երկիրը անցաւ, որուն ափունքը Եարան Եարան (մշտահոս ջուր) կը քերէ, ուր վոնկացեղապետին հետ ծանօթացաւ, որ վայել չաղէմ երևոյթով և բարեկիրթ շարժ-



մունքներով մէկ մըն էր. կերպարանքն եւրոպացի կրնար զուրցուիլ, թէ որ մորթին մութ գոյնը չունենար : Նաև Սիմէռն անունն ալ կը տրուի իրեն, որ մկրտութեան անունն է : Հագուստով նորագոյն տարազին կը հետեի, իսկ բնակարանի համար գոհ չըլլար ծառի կեղեներով կամ տերեներով խրճիթ մը ունենալ, ինչպէս են միւս իր ընկերակից թագաւորաց բնակարանները . հապա իրեն համար մասնաւոր բնակարան մը շինած է, որ թէպէտ և ծառի կեղեներով է, այլ վայելուչ է և մաքուր, և մէջը նաև մէկ քանի չըեղասիրութեան առարկաներ կան, ինչպէս ստոներ, աթոռներ և անկողին մը : Նաև իր Մարիամ կինն ալ, կերպերուն, սովորութեանց և հագուստին մէջ՝ եւրոպական նմանութիւններ կը փնտռէ :

Վիկտորիայ գաղթականութեան բընիկները քսան տարի առաջ հազարաւոր կը թուէին, և հիմա հազիւ թէ քանի մը հարիւրաւոր կան : Քաղաքականութիւն հետզհետէ կը վերցընէ զիրենք մէջտեղէն . կամ ան է որ կամաց կամաց հաստատուն կեանքի զիրենք ախոր ժեցնելով եւրոպացւոց հետ կը խառնէ, որով և արտաքոյ կարգի շուտ կը մեռնին, և կամ ձանձրացած այն քաղաքականացեալ բոնադատութենէն, որ իրենց համար բնութեան դէմէ, ինքզինքնին անտառներուն մէջ կը թաղեն . այսպէս հետզհետէ ցեղերնին նուազելով, քիչ ատենէ բոլորովին վերնան պիտի մէջտեղէն :

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ Ա.ՌԱԶԻԿԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԽԱՆԻՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Թոքոց շարժմունքը :

(Տես Երես 295)

Կը յուսամ թէ բաւական բան զուրցեցի քեզի, սիրելի օրիորդիկ, որ կարե-

նաս ըմբռնել այն ուժը որով, օդը՝ բոլը երկրիս երեսին վրայ գտնուած մարմինները, և մերն իսկ հետեաբար, կը ճնշէ :

Մէջ մը որ ատ ըմբռնես, չկայ զիւրը ըմբռնելի բան՝ քան հասկընալ թէ ինչպէս օդը մեր թոքոց մէջ կ'երթայ ու կու դայ :

Երբ խոհակերը երկու կամ երեք պղտի կայծերով իր կրակարանին ածուխը վառել կ'ուղէ, ինչ կ'ընէ :

— Փուքը կ'առնէ :

— Եւ երբ ձեռքի տակ փուք չունի :

— Բոլոր ուժովը վրան կը փչէ :

Հայ, հայ . ուրեմն կենդանի փուք մըն ենք, որ ըստ պիտոյից փայտէ ու կաշիէ փըքին տեղը կրնանք լեցընել. և թէ կը ընանք փըքին պաշտօնը ընել, միթէ անո՞ր համար է որ 'ի մեզ փըքի նման շինուած պղտի մեքենայ մը ունինք :

Ստոյդ այդպէս է, և ասիկայ ինծի առիթ մըն է, որ թոքոց խաղը հասկըցնելու համար՝ փըքին խաղը մեկնեմ քեզի, որ ամենուն ձեռքը կը գտնուի, և սակայն գործածողաց երեք քառորդը երբեք անոր մեկնութիւնը փնտռած չէ :

Փուքը, ինչպէս զիտես, երկու տախտակներէ կը բաղկանայ, որ ըստ կամն կրնան հեռանալ ու մերձենալ մէկմէկու, և կաշիի կտորով մը մէկմէկու յարեալ են, զոր անանկ յարմարցուցած է, որ ինք իր վրան ծալլուի երբ տախտակները մէկմէկու մօտենան . անանկ որ ասոնց մէջ տեղը ինչպէս աղէկ գոյց տուփ մը կը ձեւանայ, որուն ընդունակութիւնը տախտակներուն իւրագանց շարժմանը համեմատ կ'աճի կամ կը նուազի :

Փուքը վար կ'առնունք ու կը տեսնանք որ տախտակները մէկմէկու վրայ յարմարցուցած են, ու տուփը ամենափոքը է : Մէջը ինչ կայ :

— Բան մը չկայ, պարապ է :

— Հայ, կը կարծես ատիկայ . կարծես նաև որ գաւաթմները պարապ են երբ մէկը մէջինը խմէ, և թէ քաղցրաւենեաց ամանները պարապ են անուշները ու տելէն ետքը : Այնչափ պարապ բաներ